

Հայաստանի Սօցիալիստական Խորհրդային Հանրապետության

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԹ ՅԵՐԿԵՆՈՒ, ՄՂԱՅԵՏ.

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՄԿԱՌԻՏԻԶՄ

(Նրա ծագման համասոց պատմությունը  
յիվ նիվնական հակասությունները)

ՊԵՏԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՈՐԹԱՆ — № 2.



ՊԵՏԱԳՐԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 56

ՅԵՐԿԵՆՈՒ — 1922.



(20 x 14)

1/3  
374 JUL 29 1917

Հայաստանի Սոցիալիստիկ Կուլտուրային Հանրապետություն


ՊՐԻՆՏՄԱՆԻ ԲՈՒՐ ՅԵՐԱՆԵՐԻ, ԻՐԱՅՆԷ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՄԿԱՌԻՏԻԶՄ

(Նրա ծագման համասոց պատմությունը յեվ հիմնական հակասությունները)

ՊՐԻՆՏՄԱՆԻ ԲՈՒՐ ՅԵՐԱՆԵՐԻ — № 2.



ՊՐԻՆՏՄԱՆԻ ԲՈՒՐ ՅԵՐԱՆԵՐԻ — № 53  
ՅԵՐԱՆԵՐԻ — 1922 թ.



Թ. 2. 9.



11-2434591

Լուսժողովարարի տպարան Վաղարշապատում

## Ս Կ Ա Ո Ւ Տ Ի Զ Ս

(Նրա ծագման հարևանոս սրբաձևությունը չեղ հիմնա-  
կան հակաառքյունները)

Պատանեկական կազմակերպությունների պատ-  
մության մեջ նրանցից և վոչ մեկը չի վայելել այն  
ժողովրդականությունը, վորպիսին վայելել է իր  
ժամանակին սկաուտական կազմակերպությունը:  
Պատանեկական վոչ մի կազմակերպություն, վոչ մի  
միջություն չի ունեցել այնքան անգամ և կողմա-  
կիցներ, վորքան սկաուտականը:

Անգլիայում, ուր ծագել է այդ շարժումը, չեք  
զանի մի պատանի այդ կազմակերպությունից դուրս,  
Փրանսիայում, Գերմանիայում և, առանձնապես,  
Սմերիկայում նա գրավում է ամենից աչքի ընկնող  
տեղը և յերեխաների վողջ կրթությունը հիմնվում է  
սկաուտական կազմակերպությունների վրա:

Յեվ դա միանգամայն հասկանալի կդառնա, յեթե  
մտաից ծանոթանանք սկաուտական կազմակերպու-  
թյան, թափանցենք նրա վողին և ըմբռնենք նրա  
կրթական սիստեմը: Վորպեսզի տարդ լինի, թե ինչ  
քան է սկաուտական կազմակերպությունը, մենք  
պեսք է ծանոթանանք նրա պատմության, մասնա-  
վորապես նրա ծագման պատմությանը:

Ինչպես վերև ասվեց, սկաուտիզմը ծնունդ է



առել Անգլիայում՝ 1908 թ., նրա հիմնադիրն յեզակ անգլիական գեներալ Ռոբերտ Բադեն Պաուելը: Յերբեմն հարց ե ծագում, թե ինչն սկսուածիցմը ծընունդ առաջ Անգլիայում, և վոչ մի վորեե ուրիշ յերկրում, և ինչն ծագելով այնտեղ, կազմակերպված լինելով անգլիան վորոշ պայմաններէ համեմատ, այնպես արագ պատմատում ստացավ մյուս յերկրներում և նրանցում վայելում ե վոչ պակաս ժողովրդականութուն: Կազմակերպության յեղանակի մանրամասն ուսումնասիրությունը բավարար պատասխան կաա և այդ հարցին:

1900 թվականներին Անգլիան շատ խախուտ դրության մեջ եր գտնվում. նրա գաղութները մեկը մյուսի հետեից ապստամբում եյին նրա լծի դեմ և նա ստիպված եր լինում լարել իր բարբ ուժերը, վորպեսզի մնա տիրողի իր գիւրջում: Բարոյականության անկումը ընդհանրապես բարոյադրվում եր անգլիական պատանեկությունը և քաղաքացիական առաքինությունները նսեմանում եյին:

Քաղաքացիական առաքինությունների այդ անկումը առաջ եր յեկել նրանից, վոր անգլիական պատանեկությունը շատ տարիների ընթացքում դանձում եր «ազատության» մեջ, առանց վորեե հսկողության, վոչ-վոր չեր հետևում նրա կրթության, գոյություն ունեցող զպրոցները չեյին կորոզանում բավարար չափով ազգել յերեխաների և պատանիների վրա և նրանք իրենց ազատ ժամանակը վաանում եյին գվարձաակերբում, կաֆեներում և բիլյարդ խաղալով: Վոչ մի բան նրանց այնպես չեր հետաքրքրում, ինչքան սպորտի անսարանը. այդ ժամանակները անգլիացի պատանին ամեն ինչ կտար, միայն թե ներկա լիներ սպորտի

և, վոր պիտավորն ե, իրանը սպորտին չմասնակցելով, հանդիսանում եյին չափազանց գործնական պիտող հաճախ գրող գաղով՝ տանուլ եյին ապիս ժամացույցը և անգամ վերարկուն: Նույն այդ ժամանակները դրպրոցների աշակերտության 50<sup>0</sup> ծ-ը բացակայում եր գաղտցից և գաղտցական ակումբները, վոր ամեն տեսակ հարմարություններ ունեյին ինքնադարգացման համար, — միում եյին դատարկ կամ, լավադույն գեպքում՝ դանում եյին պատանեկության զվարճարաններ: Զարմանալի չե, վոր այդ ձևով կրթվող պատանիությունը չկարողացավ տալ առողջ և ոգաակար մի բան: Պարզ ե, վոր քաղաքացիական առաքինությունները Անգլիայում պիտի ընկնեյին և Անգլիայի պատանիությունը ընկնում եր որեցոր: Մյուս կողմից բանվորության դրությունը Անգլիայում վատանում եր հետզհետե, ավելանում եր անգործների թիվը, պակասում եր աշխատավարձը և դրա հետ միասին ավելանում եր բանվորների յերեխաների թիվը, յերեխաներ, վորոնց չքափորությունը շարտել եր փողոց: Կասկած չկա, վոր փողոցը նրանց պիտի դատարակեր յուրովի, և յեթե հարուստների գավակները ընկնում եյին բարոյապես ու ֆիզիքապես, բանվոր յերեխաները կորցնում եյին իրանց բարոյականությունն ու առողջությունը մեծ, գործարանային քաղաքների կեղտոտ փողոցներում: Յերկու կողմից ել միատեսակ արագությամբ, պատանիությունը փչանում եր:

Այդ ժամանակին եր և բուրբի ապստամբությունը. նրանք ապստամբեցին, վորպիսով ապապեն անգլիացիների ասելի լուծը: Նույն ժամանակները սկսվեցին ազմական գործողություններ Հնդկաստա-



նում: Բազեն Պառելը, այդ ժամանակները ղեռ հա-  
 տարակ սպա, առաջիններից մեկն էր, վոր գնաց  
 Հնդկաստան, և պետք է ասել, թշնամիների համար  
 շատ զգալի աշխատանքներ էր կատարում և զրեթե  
 միշտ հաղթող հանդիսանում: Մանկութունից դաս-  
 տիարակված լինելով բռնակային կյանքի մեջ՝ Բազեն  
 Պառելը պատվով էր կրում սպայի իր անունը և  
 միշտ ու ամենուրեք մնում էր առաջին շարքերում,  
 առանձնապես այնտեղ, ուր պահանջում էր հայրե-  
 նիքի շահը: Ինչպես հայտնի յե, ռազմական գործո-  
 ղութունները Հնդկաստանում տարվում էյին սարկա-  
 ցման շուրջը և Բազեն Պառելը, վարպես իսկական  
 անգլիացի, չէր կարող այդ խնդրում անտարբեր  
 մնալ: Բուրական պատերազմը նույնպես յեռում էր-  
 բուրերը ցույց էյին ասլիս լավ կազմակերպություն  
 և համարձակություն իրենց սպասությունը նվաճելու  
 գործում և կռվում էյին վորպես բնության իսկական  
 զավակներ: Նրանց զորամասերը, վոր անգլիական  
 զորքերից թվով կրկնակի, յեռակի պակաս էյին  
 լինում, միշտ հաղթող էյին հանդիսանում, վորով-  
 հետև անգլիական յերես առած յերիտասարդությունը,  
 վոր սովոր էր քաղաքային փափուկ կյանքի, չէր  
 կարողանում զիմանալ բուրերին, վորոնք ապրում  
 էյին բնության մեջ և բնության հետ, հրաշալի գի-  
 տեյին տեղազրությունը և, վոր ամենադիտավորն է,  
 հավատացած էյին, վոր իրենց գործը արդար է: Յեմ  
 ահա այդ կռիվները և ռազմական գործողությունները  
 ժամանակ, յերը անգլիացիներն ստիպված էյին գործ  
 դնել ամեն տեսակ ճարպիկ միջոցներ, Բազեն Պա-  
 ռելը և վոմն Ռորերա Սեսիլ Մերֆիկինդամ, տեսնելով  
 այն ճգնաժամային դրությունը, վորի մեջ հաճախ

էյին լինում անգլիացիները, շնորհիվ ապստամբ  
 սարակների, — մտածեցին սգաագործել յերեխաներին  
 իրենց դործի համար: Բազեն Պառելը հավաքեց մի  
 խումբ փոքրիկ սղաներ, նրանցից պատրաստեց բա-  
 վականաչափ մարզված հետախույզներ և նրանց մի-  
 ջոցով անում էր այն, ինչ կարելի յե անել մեծերի  
 միջոցով: Յերեխաները, վորոնց ներշնչում էյին  
 սուրբ, անձնագործություն պահանջող սեր դեպի նոր  
 հայրենիքը՝ Անգլիան, սիրով էյին կատարում այդ  
 բաները, մանավանդ վոր նրանք, վորպես յերեխաներ,  
 սեր ունեյին նման զբաղմունքներին: Ամենքը գիտեն,  
 թե ինչպես յերեխաները սիրում են նմանիկ հասա-  
 կավորներին, առանձնապես ռազմական գործերում:  
 Պատանին ամեն ինչ կտա, միայն թե մի զիշեր գտնվի  
 իր յերևակայած բանակում, վորն իբր թե շրջապատ-  
 ված է թշնամիներով, և նա ընդունակ է անգամ  
 ամբողջ զիշեր պահակություն անել: Բազեն Պառելը,  
 տեսնելով ինչպես մարզվում և կարգապահության  
 են յենթարկվում յերեխաները այդ խաղերի և զբաղ-  
 մունքների մեջ, վորոշեց Անգլիա վերադառնալուն  
 պես նույնպիսի վործեր անել անգլիական յերեխա-  
 ների հետ:

Պատերազմը յերկարեց, ապստամբները կռվում  
 էյին քաջարար մինչև վերջին կաթիլը արյան: Բայց  
 անգլիական վոսկին, սեխնիկան, գլխավորապես վարձ-  
 կան զորքերը արին իրենց գործը. ապստամբությունը  
 ճնշվեց, ապստամբները մահվան դատապարտվեցին  
 և խաղաղությունը վերականգնվեց:

Բազեն Պառելը, Անգլիա վերադառնալով, տես-  
 նելով բարոյականության անկումը անգլիական պա-  
 տանիության մեջ, արագացրեց իր մտադրության



էրականացումը և սկսեց մշակել պատանխութունը կազմակերպելու և գասախարակելու նոր յեղանակ և այդ յեղանակը կոչեց «սկաուտինգ» սխառնմ: Անու- նը վերցված է սկաուտ բառից, վոր անպէրեն նշանակում է՝ հետախույզ: Այդ կազմակերպութեան մեջ մանուկ յերեխաները պետք է կոչվեյին բոյ-սկա- ուտներ, վոր նշանակում է պատանի—հետախույզ: Այդ ժամանակները Անգլիայի լավագույն ուժերը մտածում էյին պատանխութեանը առողջացնելու խըն- գիւրներէ վրա և սկսել էյին ստեղծել դանազան տեսակէ խմբեր, վակ վարժարաններ, գաղութներ և նման կազմակերպութեաններ, նպատակ ունենայով դրանց միջոցով վերածնել պատանխութեանը:

Բազեն Պաուելը գասընթացներ բացեց սկաու- տական գործի՝ հրահանգիչներ պատրաստելու, վո- րոնց անվանում էր սկաուտ-վարպետներ, գասընթաց- ներից հետո նա ձեռնարկեց սկաուտական խմբերի կազմակերպութեան: Կազմ. յեղանակը նա մշակել էր արգեն, բայց ընդհանուր գծերով միայն. մանրա- մասնութեանները մնում էյին և պետք է լրացվեյին կյանքի և տեղական պայմանների համեմատ: Կազմ. յեղանակը կայանում էր հետևյալում.— համալրվում էր պատանխներէ մի խումբ, առաջերայես 12—18 տարեկան և հրահանգչի՝ սկաուտ-վարպետի գեկա- վարութեամբ նրանց սովորեցնում էյին զինվորական շարքային ուսմունք և մարզանք: Չմեռ սկաուտները իրենց ախումբում զբաղվում էյին ինքնագարգացումով, իսկ ամառը դուրս էյին գալիս մի վորեւ տեղ բանակ գնելու, ուր յերևան էր գալիս սկաուտիզմի զբաղիչ կողմը. այգտեղ՝ բնութեան զրկում, սկաուտներն ապ- բում էյին, հնարավորութեան սահմաններում իրենք

կատարելով այն բոլորը, ինչ պետք էր Իրենց համար կերակուր էյին յեփում, տնակներ, վրաններ էյին շի- նում. կազմակերպում էյին խաղեր, վորտեղ իսկապես սովորում էյին ամեն բան: Այսպես, սրինակ, լինում էյին խաղեր, վորտեղ յերեխաները սովորում էյին ձարպիւթ յուն, համարձակութեան և ձեռք էյին բե- րում կամքի ույժ: Խաղեր կան, վորոնց միջոցով պա- տանին կարող է գարգացնել իր տեսողութեանը, լսողութեանը, հոտաւութեանը և այլն: Սկաուտներն ունեյին իրենց սովորութիւնները, իրենց սրենքները, պատվիրանները, վորոնք նրանց արգելում էյին ծը- խել, զոգութեան անել, սուտ խոսել, նրանցից պահանջ- վում էր մաքրութեան և մաքրասիրութեան:

Ազրելով բնութեան զրկում, միշտ խաղով ու մարզանքով զբաղվելով, նրանք գասախարակվում էյին Ֆիզիքապես և բարոյապես: Այդ բոլորը աջող- վում էր հեշտութեամբ, վորովհետեւ այդ բոլոր աշ- խատանքը հետաքրքրական է: Յեզ բնական է, վոր պատանխութեանը այդ ամենը սիրելով անազին խմբերով մանում էր կազմակերպութեան մեջ: Կա- ուավարութեանը տեսնելով այդ կազմակերպութեան անազին ոգակարութեանը՝ սկսեց հովանավորել նրանց և սոպա հայտարարեց պետական կազմակեր- պութեան: Առաջին իսկ տարին սկաուտական կազ- մակերպութեան մեջ՝ միայն Անգլիայում, կար մինչև 500,000 սկաուտ, կատարելապես կազմակերպված և սկաուտական գաղափարներով տոգորված:

Հետագայում այդ շարժումն անցավ մյուս յեր- կրները և շուտով տարածվեց, ինչպես և Անգլիայում: Ծագելով 1908 թվին, գա Ռուսաստան մտավ 1910 թվին՝ պատանի հետախույզների կազմակերպության



անունով, իր շարքերի մեջ առնելով ուսու պատանիներին: Այսպէս ծագեց և սարածվեց սկառուտական շարժումը:

Այժմ տեսնենք—վորձնք են նրա գաղափարները, նպատակները և նա ինչպէս է ձգտել դրանք իրականացնելու: Ամենից առաջ ընդդէմեցինք այն փաստը, վոր սկառուտիզմը ծագեց Անգլիայում, բուրժուական մի յերկրում, միքանի ժողովրդների սարկացման տարիներում և վոր նրա հիմնադիրն յեղավ հնդկական արշավանքի հերոս գեներալ Բադեն Պաուելը: Բուրժուական Անգլիան պետք էր զգում պատրաստել իր պատանիները, վոր նրանք հանդիսանան իր արժանավոր հաջորդները, ուզում էր զարգացնել նրանց մեջ միլիտարիզմ, պատվաստել նրանց մեջ այն գիտակցութիւնը, թէ անգլիացիները վերուստ շնորհված եյակներ են, իսկ իրենց գաղութներում բնակվող մնացյալ ժողովրդները ստոր ցեղերի մարդիկ են և պետք է իրենց ծառայեն:

Անգլիային պետք էր ստեղծել մի սխտեմ պատանիութիւնը դաստիարակելու այնպէս, ինչպէս արհանձում են բուրժուական շահերը: Յե՛վ սկառուտիզմը, անկասկած, արավ այդ բանը: Ահա թէ ինչն է, սկառուտիզմը վորպէս այդպիսին, պետք է պատասխաներ թէ բուրժուական յերկրների պահանջներին և թէ արտացոլեր իր մեջ անգլիացիների ցանկութիւնը՝ թէ ամեն մի անգլիացի պիտի ունենա վո՛չ ավել, վո՛չ պակաս, քան իննը սորուկ. այդպէս էլ գեն. Բադեն Պաուելի հերոսական վոգուն հարմար յեկավ սկառուտինգ սխտեմը, վոր ավելի քան լավ արտացոլեց իր մեջ այդ վոգին և, վոր դիւալորն է՝ իրականացրեց: Թեթևակի քննենք սկառուտիզմ սխտեմը և

մեզ համար այդ բոլորը պարզ կլինի: Նախ և առաջ Բադեն Պաուել ասում է, թէ սկառուտիզմը չի խառնելում քաղաքականութիւն և հեռու յե նրա ազդեցութիւնից:

Տեսնենք այդպէս է արդյոք:

Ամեն մի առողջամիտ մարդ կասի, վոր յերբեք, վնչ մի տեղ չի յեղել և չի լինի մի կազմակերպութիւն, վոր չմիջամտի քաղաքականութիւն: Ամենից առաջ նա չի կարող գոյութիւն ունենալ, վորովհետեւ քաղաքականութիւնը այս կամ այն կազմակերպութիւն ֆունկամենտն է, առանց վորի կազմակերպութիւնը կմնար սղում կախված, և ինչ վոր ամենագլխավորն է—դա նա յե, վոր սկառուտիզմը հենց քաղաքական կազմակերպութիւն է և վորպէս այդպիսին գոյութիւն է ունեցել պետականացած և իրականացրել է բուրժուական կառավարութիւն գաղափարները: Այդ ժամանակ ինչպէս բացատրել այն յերևույթը, վոր սկառուտական կազմակերպութիւնը փողոցներից հաճաքում է բանվորների և չքավոր գյուղացիների յերեթաներին, կազմակերպում է նրանցից սկառուտական խմբեր, մարդում նրանց և դաստիարակում բուրժուական պետութիւնը հարկավոր վոգով և այդ բանում հասնում է այնքան փայլուն հետևանքների, վոր սկառուտական խմբերը 1915 թ. ուղարկվում են մինչև անգամ ուղամակաա, դեռ մի կողմ թողնելով այն) վոր սկառուտներն եյին կատարում թիկունքային գրեթէ բոլոր աշխատանքները: Այնուհետև, մենք ասինք, վոր սկառուտները ունեն իրենց սրենքները: Նայենք ինչ են ասում զրանք և մենք կտեսնենք, վոր սկառուտական կազմակերպութիւնն ամբողջովին թաթափված է բուրժուական վոգով և նրա մեջ մտնող պա-



աանիների ուղեղը մթազնել են բուրժուական ար-  
վեստի բոլոր ձևերով: Մկառուտի առաջին սրենքն է.  
«Հափատարիմ լինել Ասածուն, թագավորին և հայ-  
րենիքին»: Այստեղ սկառուները ըստ իրենց սովոր-  
բուժյան շատ վորսշ և արամաբանութեն ընդգծել են  
իրենց մտքերը:

«Հափատարիմ լինել Ասածուն, թագավորին և  
հայրենիքին» — յերեք ամենագլխավոր գործունը բուր-  
ժուական հասարակության, յերեք գլխավոր միջոց  
աշխատավոր ժողովուրդ սարկացնելու և ճարտացնե-  
լու: Յե՛վ սկառուներն խսկապես իրազործում էյին  
այդ սրենքը. Աստված նրանց համար ամեն ենչ եր,  
վարի վրա հիմնվում է նրանց աշխարհայացքը, հայ-  
րենիքը — գա մի այնպիսի սրբություն է, վորի հա-  
մար սկառուները հարյուրներով զինված՝ հ. — Պոլսից  
յեկան Յերեան նրան փրկելու, իսկ յերբ իշխանու-  
թյունն անցավ խորհուրդների ձեռքը, մի մասը նը-  
բանց հեռացավ յերկրից, հեռու տանելով իր մեղա-  
վոր հոգին «ընկերներից» և «կացնավորներից»,  
մասամբ էլ տեղավարվեցին ամերիկական կոմիտե-  
ներում, գանելով ստք տեղեր: Իսկ քաջախորը — դա  
Ասածու ոճյալ է, վոր այս աշխանի մարդ է, մաքրու-  
թյան և ճշմարտության խարճրգանշան, մի խոսքով  
ամեն ինչ, վորին կարելի չէ խոնարհել, աստվածա-  
ցնել և վորի համար, հարկ յեղած դեպքում, կարելի չէ  
կյանքը չինայել: Ազգայնականությունը ամենազրդ-  
խավոր և հիմնական գիծն է սկառուաիցմի, ահա թե ին-  
չու ազգային — բուրժուական վորով դաստիարակված  
քաղբենի պատանիությունը այնպես սիրով եր մտնում  
յե ազգույն գրողի տակ, ահա թե ինչու բուրժուական  
կառավարությունները հովանավորում էյին սկա-  
ռուաիզմը:

Մկառուտի մի ուրիշ սրենքն է. — ամեն սր բարե-  
ծառայություններ մատուցել ամենքին անխախտ և  
առանձնապես քաղաքավարի լինել մանուկների, ծե-  
րերի և կանանց հետ: Բայց տեսնենք ինչու՞ն է կա-  
յանում այդ բարի գործը: Մի՞թե նրանում, վոր  
սկառուը պետք է ոգնի կապոցներով ծանրաբեռնված  
բուրժուալին իր բեռը տուն հասցնելու և, վոր ա-  
մենից զեղեցիկն է՝ «կոպեկ տա մուրացկանին»,  
չիմանալով, իհարկե, վոր իր հայրը, լավագույն  
գեպընում իր քեռին այդպիսի մուրացկաններից և չը-  
քավորներից մի կոպեկ չի վոր պոկել են, սկառուը  
իհարկե, չեր կարող իմանալ, վոր ինքը իր գործա-  
բանատեղ հոր հետ պատրաստում և առաջ են բերում  
այդպիսի չքավորներ, և նրանց ոգնելու համար կո-  
պեկներ չէ, վոր պետք է ալ, այլ մի ուրիշ բան:  
Որենքի յերկրորդ մասում նույնպես շատ ցայտուն  
կերպով է նկատվում բուրժուական հայացքը կնոջ  
նկատմամբ. «մանուկներ, ծերեր և կանայք» — յերեք  
թույլ արարածներ: Այսպիսի դաստիարակությունը  
նրանց մեջ արմատավորվել է ամենավաղ մանուկու-  
թյունից և, պարզ է, վոր նրանք կնոջը չեն կարող  
յերևակայել իրենց հավասար — չե՞ վոր նա թույլ ա-  
րարած է: Բոլոր մյուս սրենքները վորչնչով լավ չեն  
հիշվածներից և ունեն նույն վորին և նույն բացա-  
արությունը կարելի չէ ալ, ինչպես առաջիններիս:  
Անգամ սկառուտի «չլսել» սրենքը՝ հանդուժում է նույն  
ստին և խարեյության, վոր տիրում է բուրժուական  
հասարակության մեջ:

Այսբանը՝ համառոտ գծերով սկառուաիզմի վորու-  
մասին:



Տեսնենք՝ վորն է «սկառուտինգ» սխտեմի էյու-  
թյունը, վոր գովաբանվում է ամենքի կողմից, ու  
էրեն «գիտակ» է համարում այդ բանում: Դմենից  
առաջ սկառուտինգ սխտեմի մեջ աչքի յե ընկնում  
նրա անսխտեմությունը խմբեր կազմակերպելու մեջ:  
Սկառուտական խմբեր առաջ են յեկել ուր կարելի յե  
յեղել—դպրոցում, փողոցում, քաղաքում, Անգլիա-  
յում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում  
և ամենուրեք ստացել է լավ պատվաստում, վորով-  
հետև գրեթե միշտ համապատասխանել է վորուն այն  
յերկրի հասարակության, վորի մեջ առաջ է յեկել.  
և ամենուրեք նրանց շարժումն ընդունել է լայն ծա-  
վալ և խոշոր շափեր, բայց արդյունք քիչ է ստացվել,  
վորովհետև բոլոր այդ խմբերն ու կազմակերպու-  
թյունները ընդհանուր վոչինչ չեն ունեցել իրար հետ,  
վոչինչ չի կապել նրանց և թեյև Բաղեն Պաուելը ասում  
էր, թե բոլոր սկառուտների հագուստն ու ձևը պետք  
է լինի միատեսակ, վորովհետև դա մտածեցնում է  
նրանց, այնուամենայնիվ մերձեցում չկար. յուրա-  
քանչյուր կազմակերպություն, յուրաքանչյուր քաղաք  
և սկառուտական յուրաքանչյուր խումբ ուներ իր  
ինքնատիպությունը և առանձնահատկությունը, իր  
որենքները և իր բացատրությունը: Սկառուտների շը-  
ջանում չկար հոգեկան միություն և, թեյև բոլոր  
յերկրների և ժողովուրդների սկառուտները մի որենք  
ունեն, վորն ասում է, թե՝ «սկառուտը յեղբայր է  
ամեն մի ուրիշ սկառուտի, առանց ազգի խտրության»,  
բայց այս որենքը միշտ էլ մնացել է թղթի վրա և  
հիշվում է միայն քննությունների ժամանակ, իսկ  
գործնականում, կյանքի մեջ յերբեք չի գործադր-  
վում, և գործադրվել էլ չի կարող, վորովհետև ազ-

գային վագով դաստիարակված անգլիացի-սկառուտը  
յերբեք չի կարող յեղբայր լինել սկառուտ—Ֆրանսի-  
ացուն, վոր նույնպես կրթված է իր ազգային վագով:  
Սկառուտների միջև տրտաքուստ միշտ էլ յեղբայրա-  
կան հարաբերություններ են, բայց հենց վոր շոշափ-  
վում են այս կամ այն ազգի շահերը—սկառուտները  
շատ շուտով մոռանում են իրանց որենքն ու մահակը,  
վորը ծառայում է նրանց վրանի համար, վորի հո-  
վանու տակ անգլիացիներն ու Ֆրանսիացիները ժա-  
մանակ են անցրել «յեղբայրաբար», և պատրաստ են  
«յեղբայրաբար» էլ հարձակվել «յեղբոր» վրա:


Սկառուտներն իրենք արդեն սկսել են գիտակ-  
ցել գործի այդ զրությունը, իրենք սկսել են զգալ  
սկառուտիզմի մեջ դոյություն ունեցող հակասու-  
թյունները և դա նրանց քայքայել է ի վնաս բուր-  
ժուական հասարակության և հոգուտ իրենց և մեր:

Այդ քայքայումը առաջ էր գալիս և նրանից,  
վոր սկառուտական բոլոր խմբերին անկարելի յեր լի-  
նում տալ մի ընդհանուր ուղղություն: Բաղեն Պա-  
ուելը, ամենայն հավանականությամբ, հաճախ իրեն  
հարց է տվել, թե հարկավոր է այն «ինքնուրույ-  
նությունը», վոր ունեն սկառուտական կազմակերպու-  
թյունները, թե՞ նրանց պետք է ղեկավարել այլ  
կերպ: Յեվ վոր նա այդ ուղղությամբ մտածել ու  
գործել է, վկայում է այն հանգամանքը, վոր սկա-  
ռուտական կազմակերպությունները իրանց ծագման  
որից՝ հարյուր անգամ փոխել են կանոնադրությունը,  
որենքները և ծրագրները: Ամենայն հավանականու-  
թյամբ Բաղեն Պաուելը մտածել է այդպիսով էյական  
մի բան ձեռք բերել այդ ուղղությամբ և գիտակցա-  
բար մոռացության է տվել, վոր գաղտնիքը զրանում



չէ, այլ նրանում, վեր ազգային բուրժուական հասարակութեան մեջ չի կարող լինել հոգեկան միութիւն, հետեաբար՝ միութիւն կազմակերպութեան ուղղութեան և աշխատանքների մեջ:

Յեւ վաղ թե ուշ պետք է կատարվի այնտեղ՝ Յեփրոպայում: Իսկ մեզ մոտ՝ Ռուսաստանում և մյուս խորհրդային յերկրներում — դա արդեն կատարվել է: Պարոն սկառու — վարպետները չափազանց դոկտրինային վեր պես եյին ձեռք առել մանկական փխրուն հոգին, չափազանց շատ եյին լարել ինքնաշարժ «սկառուախնգ» մեքենան, վորի զսպանակը չղիմանալով՝ քանդվեց — ցավազին հարված հասցնելով պարսնայք Պանայուխովներին, Պապովներին և Պրեոբրաժենսկիներին, և «սկառուախնգը» կրկին անցավ Անդլիա, իսկ մեզ մոտ յերեան յեկան պատանեկական կազմակերպութիւն, պատանեկական խմբեր, վորոնց եյութեան մասին կխոսենք յոր այլ զբոբույիլի մեջ:



77 Ազգային գրադարան  
NL0864010



260

11

24345

ՊԱՏԿՈՄԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ

1. Հայաստանի Պատկանական կաղմակներգության  
Ծրագիր և Գանձադրություն . . . . . —
2. Ս. Մանուկյան—Սկսուտիկով . . . . . 10 4.

ԳԻՆԸ 10 4.